01/10.1/7910-09
2009-11-10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արծվիկ Մինասյանի, Արտյուշ Շահբազյանի, Վահան Հովհաննիսյանի, Գագիկ Գևորգյանի, Արա Նռանյանի, Լիլիթ Գալստյանի, Ռուզաննա Առաքելյանի, Արմեն Ռուստամյանի և Արայիկ Գրիգորյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Բռնադատվածների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

Հայաստանի Հանրապետության կառավարության համար ընդունելի է բռնադատվածներին պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու գաղափարը, սակայն գտնում է, որ նախագծով նախատեսված հոդվածներով արտոնյալ պայմաններով երկարաժամկետ վարկեր տրամադրելու վերաբերյալ դրույթները ոչ թե պետք է փոխարինվեն, այլ պետք է լրացվեն ֆինանսական աջակցության վերաբերյալ դրույթներով։

AJV-46-07

Միաժամանակ, հստակեցման նպատակով, առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածը «բռնադատվածներին» բառից հետո լրացնել «սույն օրենքի պահանջներին համապատասխան» բառերով, քանի որ բացի «Բռնադատվածների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան տրամադրվող բյուջետային վարկերից, բռնադատվածներին կարող են տրամադրվել նաև այլ բյուջետային վարկեր։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հայտնում է, որ օրենքի նախագիծն ընդունելի կլինի մեր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում։

Հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Գևորգ Պետրոսյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-734-08.10.2009-ՍՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Բռնադատվածների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1994 թվականի մայիսի 25-ի, ՀՆ-1062-Ի «Բռնադատվածների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (հետայսու՝ օրենք) 6-րդ հոդվածի

ա) առաջին մասում «արտոնյալ պայմաններով հատկացնելով երկարաժամկետ վարկ» բառերը փոխարինել «տրամադրելով ֆինանսական աջակցություն» բառերով,

բ) վերջին մասում «արտոնյալ պայմաններով երկարաժամկետ վարկ» բառերը փոխարինել «պետական ֆինանսական աջակցություն»։

Հոդված 2. Օրենքի 7-րդ

ա) հոդվածից հանել «արտոնյալ պայմաններով երկարաժամկետ վարկեր տրամադրելու համար» բառերը։

բ) հոդվածում «վարկեր» բառը փոխարինել «ֆինանսական աջակցություն» բառերով։

Հոդված 3. Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը բռնադատվածներին տրամադրված բյուջետային վարկերը վերաձեւակերպվում են որպես պետական աջակցություն, վարկառուներին ազատելով վարկային պարտավորության (հիմնական գումարի, տոկոսի, տույժի) մնացորդի վճարային պարտավորություններից։

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2010 թվականի հունվարի 1-ից։

ՕՐԻՆԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Օրինագծի հիմնական նպատակն է առավել նպատակային դարձնել բռնադատվածներին պետական աջակցության մեխանիզմը: Խնդիրն այն է, որ օրենքում առկա ձեւակերպումը այդպիսի հիմնական աջակցությունը դիտում է արտոնյալ պայմաններով վարկ տրամադրելով, մինչդեռ այդ միջոցների մեծությունն իրականում չի ապահովում բնակարանի ձեռք բերումը, առակա բնակարանի պատշաճ վերանորգումը կամ անավարտ բնակարանի շինարարության ավարտը *(ըստ ՀՀ կառավարության 2000թ. հուլիսի 20-ի թիվ 410 որոշման այդ գումարը չի գերազանցում 5մլն. դրամը եւ որպես կանոն միջինում կազմում է 3,2մլն դրամը):*

Մյուս կողմից, կյանքը ցույց է տալիս, որ սոցիալական նկատառումներով անապահով խմբերի համար իրականացվող արտոնյալ վարկային ծրագիրը ձախողվում է՝ սպասարկման անկարողության եւ ներման մշտական սպասումի պատճառով:

Առկա է նաեւ նախադեպ. երբ, օրինակ աղետի գոտու բնակաշինարարության համար տրամադրված 25 տարի ժամկետով տարեկան 1%-ով վարկերը նախ երկարաձգվեցին, ապա ներվեցին, մի մասը օրենքով, մնացածը՝ կառավարության որոշմամբ *(ՀՀ կառավարության 2002թ. սեպտեմբերի 19-ի թիվ 1478 որոշում)* , իսկ սոցիալական ուղղվածության վարկային այս ծրագիրը վերափոխվեց աջակցության ծրագրի՝ բնակարանի գնման վկայագրի (ԲԳՎ) ձեւով:

Բռնադատվածների մասով հիմնական պարտավորությունները կետանցված են, արդեն իսկ պարտքի բռնագանձման դատական վարույթներ են ընթանում երկու տասնյակից ավել վարկառուի մասով: Ինչն իր հերթին ծրագիրը դարձնում է խիստ խոցելի, իսկ նպատակն՝ անիրականանալի:

Օրինագծի ընդունումը անդրադարձն է ունենալու նաեւ 2010 թվականի պետական բյուջեի օրինագծով ներկայացվող ձեւակերպումների վրա: Ուստի, առաջարկվում է նաեւ 2010թ. բյուջեի նախագծում արտացոլված 200 մլն. դրամանոց վարկային ծրագիրն անհրաժեշտ է փոխարինել նույն գումարով պետական աջակցության ծրագրի: